ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՆԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Տեղեկատվություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 4 – 8 էջեր

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ 8 - 10 էջեր

Արձանագրված այլ փաստեր 11 - 14 էջեր

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 135-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը :
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19-ից մինչև հուլիսի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինն երորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի առաջին եռամսյակի համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը պետական բյուջեի ծրագրերով նախատեսվել է հատկացնել 3,131,116.6 հազ. դրամ, ճշտված պլանը ևս կազմել է 3,131,116.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 2,227,700.3 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2021 թվականի առաջին եռամսյակի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Տեխնիկական անվտանգության կանոնակարգում				
Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ	7,870.5	7,870.5	7,870.5	7,870.5
Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում				
Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար անձնակազմի և մասնագետների վերապատրաստման կազմակերպում	25,256.7	25,256.7	25,256.7	28,735.0
Սեյսմիկ պաշտպանություն				
Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում	136,591.8	136,591.8	136,591.8	141,386.2
Փրկարարական ծառայություններ				
Փրկարարական ծառայություններ	2,660,882.4	1,781,342.7	1,701,539.2	2,447,067.3
Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպում	8,924.3	8,924.3	8,924.3	9,836.0
Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման կազմակերպում	2,424.4	999.0	999.0	999.0
Փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում	156.0	-	-	-
Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում				

Պետական ռեզերվների պահպանում	75,375.8	75,375.8	75,375.8	75,375.8
Նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում	4,794.5	-	-	-
Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ				
Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում	208,840.2	191,339.5	186,225.5	247,035.1
Ընդամենը	**3,131,116.6**	**2,227,700.3**	**2,142,782.8**	**2,958,304.9**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսերի ֆինանսավորումը կազմել է ճշտված պլանի 71.1 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 2,142,782.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 68.4 %-ը:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսվել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է իրականացնի վեց ծրագրեր:

- «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրով իրականացվում է մեկ միջոցառում՝ «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ», որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 7,870.5 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են հինգ արդյունքի չափորոշիչներ՝ կանոնակարգերի մշակման քանակ, արտադրական պատահարների և տեխնածին վթարների քանակ, արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործողների ուսուցում և որակավորում:
- «Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում» ծրագրով իրականացվում է մեկ միջոցառում՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար անձնակազմի և

մասնագետների վերապատրաստման կազմակերպում», որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 25,256.7 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են յոթ արդյունքի չափորոշիչներ, որոնք հիմնականում վերաբերվում են ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մասնակիցների թվին:

- «Սեյսմիկ պաշտպանություն» ծրագրով իրականացվում է մեկ միջոցառում՝ «Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում», որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 136,591.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են յոթ արդյունքի չափորոշիչներ, որոնք վերաբերվում են դիտարկումների քանակներին և սեյսմիկ պաշտպանության վարքականոնների ուսուցմանը:
- «Փրկարարական ծառայություններ» ծրագրով, որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,672,387.1 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,791,266.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 67.0 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,711,462.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 64.4 %-ը: Ծրագրի միջոցառումները չորսն են.

1. «Փրկարարական ծառայություններ» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,660,882.4 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,781,342.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 67.0 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,701,539.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 64.0 %-ը: Միջոցառման համար սահմանված են հինգ արդյունքի չափորոշիչներ, որոնք հիմնականում վերաբերվում են ահազանգերի ստացման պահից մինչև մեկնում, մինչև կանչի վայր հասնելու և մինչև գործողությունների ավարտի միջին ժամանակահատվածներին:
2. «Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը

ճշտված պլանով նախատեսվել է 8,924.3 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ՝ արտակարգ իրավիճակների արձագանքման մասնակցություն, մարդասիրական օգնության տրամադրում տուժած բնակչությանը և ՓԾ ստորաբաժանումների անձնակազմի ուսուցման ու որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում:

3. «Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման կազմակերպում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,424.4 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 999.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 41.2 %-ը: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ՝ կրթաթոշակ ստացող փրկարարական աշխատակիցների թիվ:

4. «Փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 156.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ՝ բնածին և տեխնածին աղետներից տուժածների քանակ:

- «Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» ծրագրով, որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 80,170.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 75,375.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 94.0 %-ը: Ծրագրի միջոցառումները երկուսն են.

1. «Պետական ռեզերվների պահպանում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 75,375.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

2. «Նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 4,794.5 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

- «Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրով իրականացվում է մեկ միջոցառում՝ «Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում», որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 208,840.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 191,339.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.6 %-ը, դրամարկղային ծախսը՝ 186,225.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 89.2 %-ը: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

Ընդհանուր առմամբ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող տաս միջոցառումներից երեք միջոցառումների համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ենթարկված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից առանձին միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերը, ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հաշվեքննության ենթարկված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Առաջին եռամսյակի

			վճարում
Ա/Ձ Արմեն Սաֆարյան	ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-20/20	9,870.0	9,870.0
Ռաֆֆի Սաղդասարյան Թորոսի ԱՁ	ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/9	10,000.0	2,000.0
Ռաֆֆի Սաղդասարյան Թորոսի ԱՁ	ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/16	9,000.0	1,238.5
Ռաֆֆի Սաղդասարյան Թորոսի ԱՁ	ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/21	7,000.0	712.3
Ռաֆֆի Սաղդասարյան Թորոսի ԱՁ	ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/1301	9,500.0	903.1
Ընդամենը		**45,370.0**	**14,723.9**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ կողմից 2020 թվականի նոյեմբերի 23-ին հրապարակվել է ՊՈԱԿ կարիքների համար «անօդաչու թռչող սարքերի» ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մասին հայտարարություն: Հայտերը բացվել են 2020 թվականի դեկտեմբերի 1-ին: Հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ ԱՁ Արմեն Սաֆարյան: Հարկ է նշել, որ ինչպես հրավերում, այնպես էլ 2020 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված՝ 9,870,0 հազ. դրամի պայմանագրում մատակարարման ժամկետը սահմանվել է «պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում», սակայն ԱՁ Արմեն Սաֆարյանի դիմումի հիման վրա մատակարարման ժամկետը համաձայնագրով երկարաձգվել է 30 օրացուցային օրով: 2021 թվականի հունվարի 14-ի հանձնման ընդունման թիվ 1 արձանագրությունով հավաստվել է ապրանքի մատակարարումը, որի դիմաց ԱՁ Արմեն Սաֆարյանին վճարվել է 9,870.0 հազ. դրամ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անօդաչու թռչող սարքերի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերի հավելված թիվ 1-ում ներկայացված տեխնիկական բնութագրով բացի ԱԹՍ-ից, ձեռք բերվող ապրանքն իր մեջ պետք է ներառի տեսախցիկ-կայունացուցիչ, հեռակառավարման վահանակ, ԱԹՍ-ի և հեռակառավարման վահանակի մարտկոցներ, մարտկոցի լիցքավորման կայան և այլ օժանդակ սարքավորումներ ու պարագաներ: Հրավերի տեխնիկական բնութագրերում գնվող ապրանքների հատկանիշները նշվել են ոչ թե միջակայքերով կամ նվազագույն չափանիշներով, այլ կոնկրետ թվերով, մասնավորապես՝ տեսախցիկի չափերը՝ 167 x 137 x 161 մմ,

քաշը՝ 828 (+ –) 5 գր, տեսախցիկի ջերմատեսիլ մոդուլի օբյեկտիվ անկյունը՝ 82,9°, ԱԹՍ մարտկոցի հզորությունը՝ 5935 mAh, մարտկոցի լիցքավորման կայանի քաշը՝ 8.37 կգ, ԱԹՍ չափերը բացված վիճակում՝ 810 x 670 x 430 մմ, փակված վիճակում՝ 430 x 420 x 430 մմ և այլ: Գնման ընթացակարգի արդյունքում միակ հայտ ներկայացրած մասնակցի՝ ԱՁ Արմեն Սաֆարյանի հետ կնքվել է պայմանագիր, որի հավելված թիվ 1-ով ներկայացվել են DJI M300RTK ԱԹՍ-ի, BS60 մարտկոցի լիզքավորման կայանի, TB60 ԱԹՍ-ի մարտկոցի ապրանքի տեխնիկական բնութագրերը, որոնք նույնությամբ կրկնում են հրավերով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի հատկանիշները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը: Բացի այդ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման հավելված թիվ 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Փաստորեն, ապրանքի ձեռք բերման նպատակով հրավերում նշված տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ համապատասխանել են միայն գնված ապրանքի տեխնիկական բնութագրերի հատկանիշներին, որի արդյունքում առաջացել են խոչընդոտներ այլ հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ այլ արտադրողների կողմից հայտեր ներկայացնելու համար և չի ապահովվել մրցակցության հավասար պայմաններ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 1,297,657.0 հազ. դրամ, որը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Փրկարարական ծառայություններ» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների ծախսեր՝ 1,391,041.1 հազ. դրամ,
2. առանձին միջոցառումների շրջանակում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների կողմից կնքված 45,370.0 հազ. դրամի 5 պայմանագրեր, որոնցով 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված ծախսերը կազմել են 14,723.9.0 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, հաշվեքննության են ենթարկվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված 1,405,765.0 հազ. դրամի ծախսերը:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Փրկարարական ծառայություններ» բյուջետային ծրագրային միջացառումով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 51 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի:

Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	«Փրկարարական ծառայություններ» բյուջետային ծրագրային միջացառում	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Բարձրագույն խումբ	0	1
Գլխավոր խումբ	1	1
Ավագ խումբ	6	6
Միջին խումբ	2	2
Կրտսեր խումբ	38	38
Պայմանագրային աշխատողներ	0	1
Տեխնիկական աշխատող	2	2
Ընդամենը	49	51

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար և մարտ ամիսների աշխատավարձերի և հավելավճարների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հաշվեքննության են ենթարկվել «Փրկարարական ծառայություններ» միջոցառման շրջանակում «մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով հրշեջ փրկարարական ավտոմեքենաների և ավտոբուսների վերանորոգման ծառայությունների գնման համար Ա/Ձ Ռաֆֆի Սաղդասարյանի հետ կնքված չորս պայմանագրերը՝ 35,500.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: 2021 թվականի առաջին եռամսյակում չորս պայմանագրերով մատուցված ծառայությունների դիմաց Ա/Ձ Ռաֆֆի Սաղդասարյանին վճարվել է գումարային 4,854.0 հազ. դրամ: Կատարված բոլոր վճարումները հիմնավորված են համապատասխան արատավորման ակտերով,

պայմանագրի արդյունքը հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերով, հանձնման ընդունման արձանագրություններով և հարկային հաշիվներով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ պետական բյուջեի տնտեսագիտական դասակարգման առանձին հոդվածներով ծախսերը չեն կատարվել: Մասնավորապես.

- «Փրկարարական ծառայություններ» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 39,883.9 հազ. դրամ ծախսերը:
- «Փրկարարական ծառայություններ» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին եռամսյակի համար «հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով ճշտված պլանով նախատեսված 10,048.4 հազ. դրամ ծախսերը:

Փաստորեն, ՀՀ պետական բյուջեով նախատեսված՝ «Փրկարարական ծառայություններ» միջոցառման ծախսերը 2021 թվականի առաջին եռամսյակում կատարվել են թերի:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված 2021 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finance և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, տարբերություններ չեն արձանագրվել:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել է անհամապատասխանություն, որը համատարած չէ:

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունը ներկայացվում է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություն

հազ. դրամ

Անհամապատասխանություն	Իրավական ակտ	Գումար
հրավերում նշված տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ համապատասխանել են միայն գնված ապրանքի տեխնիկական բնութագրերի հատկանիշներին	«Գնուների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետ	-

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ չունի, ներկայացրել է բացատրություններ:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն: